

ՄԻ ԶԵՇԱԳԻՐ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹԵԱՆ
ԳՈՂԱԲԻԹԻՒՆ

Մայրաքաղաքի լրագրներում գտնում
ենք հետեւալ հետաքրքրական առղերը մեր
երկրի հնագիտական գանձերի մասին։

«Անդրկովկասում՝ գրում է Բիրջ. Ենք.,
—Հնութեան շատ հետաքրքրական և խիստ
թանկագին յիշատակարաններ կան, որ 2,500
և աւելի տարի մեզանից առաջ եղած շրջա-
նի են վերաբերում։ Օրինակ, բևեռագիր ար-
ձանագրութեանց մէջ կայ մօտ 25 հատ, որ
պարունակում են վանի թագաւորների ա-
նուններ, որոնք զանազան տեղերում թողել
են իրենց նրասին հովառում և Սևանայ լճի
շրջակայքում արած նուածումների յիշա-
տակներ։ այս արձանագրութիւնների արժեքը
մեծանում է աւելի այն պատճառով, որ դո-
քա Ռուսաց պետութեան սահմաններում
դպրութեան հնագոյն յիշատակարաններն են։
Դժբաղդաբար այդ հին յիշատակարանները,
որ ցրուած են ուսւական չայտատանի ժայ-
ռերի վրայ և ազատ են մնացել մթնոլորտի
աւելիչ ազգեցութիւնից հազարամետակների
ընթացքում ապահովուած չեն մարդու ձեռ-
քով ջնջուելուց կամ յափշտակուելուց։ Ահա
ապացոյց, նոր է յայտնուել և հաստատուել
այն իրողութիւնը, որ Արարատի ստորոտում
Տաշրուուն գիւղի մօտ եղած հնագոյն
նշանաւոր 24 տող բևեռագիր արձանա-
գրութիւնը, որ պարունակում է Վանի Մե-
նուա թագաւորի (ՄԱ գարու սկզբում ն. Ք.
Ք.) շրջակայ երկրի նուածելու պատմութիւ-
նը, յափշտակուած է։ Նորեքս Մոսկուայի
հնագիտական ընկերութեան նախագահ Կոմ-
սուհի Ն. Ս. Ռովարովան լուր է ստանում,
որ այդ արձանագրութիւնը մի օտարերկրացի
կարել է տուել և տարել է արտասահման,
ինչպէս նաև էլլասի Արգիշտի թագաւորի
արձանագրութիւնը։

Երեանի նահանգապետը հաստատել է
առաջնի մասին եղած լուրը։ յայտնուում է
որ գեւ 1898 թ. մի օտարական Տաշրուու-
նում 7 ռուբլով կարել է տալիս մի քարտա-
շի այդ արձանագրութիւնը (1,14 մետր բարձր
և 1,16 մետր լայն.), ժայռի այդ կտորը տա-

նում է Երեան, ուր և անհետանում է, ե-
րեկ ուղարկուում է արտասահման։ *:

Մայրաքաղաքի լրագիրը անհրաժեշտ է
համարում։ որ երկրի հնութեան բոլոր նըշ-
խարները պետութեան սեպհականութիւն հը-
րատարակուին՝ այսպիսի յափշտակութիւն-
ներից ազատ պահելու համար։

ԱՐԱՐԱՑԻ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Բագուի հայ Եկեղեցիների բարեկարգիչ
Տ. Արևէն վարդապետ Խլութեան իմ հասցէով
ուղարկել էր $40\frac{1}{2}$ արշին ուսական մանու-
շակագոյն տեղով զատ Ս. հշման տեղի ծած-
կոցի համար եւ մետաքսեայ սպիտակ երկու
մեծ շուշփայ՝ զատկական տօների առիթով
նուէր բագուեցի բարեպաշտ ազգայիններից։

Վեհ. Հայրապետի բացակայութեան
պատճառով այդ նուէրը մատուցի Ամենապա-
տի Տեղապահ Տ. Արիստակէս Սրբազն
Արքեպիսկոպոսին, որ եւ յանձնեց Մայր Տա-
ճարի լուսարարապետ Տ. Գեւոնդ վարդապե-
տին նպատակին համեմատ գործադրելու նուէ-
րը։

Պատիւ ունիմ նորին Բարձր Սրբազնու-
թեան սրտագին չնորհակալութիւնն ու օրի-
նութիւնը Արարատի միջոցով յայտնել Տ. Ար-
ևէն վարդապետին՝ որ աշխատեց եւ նուիրա-
բերողներին, որ իրեւ իսկական հայ—քրիս-
տոնայ ընդհանուր քրիստոնէութեան ուրա-
խութեան տօներին շմորացան նաեւ Մայր
Աթոռը։

Յուսիկ վարդապետ։

Ա Զ Դ Պ.

Գունձասարի վանքի հանբածանօթ ջրա-
զացքարերի հանքից օդառողներին նախա-
զգուշացնում ենք, որ վերջին ժամանակներս
ոմանք Առաջաձոր գիւղի հասարակ և փխրուն
քարելից հանելով ջրալացաքարեր, կեղծելով
վաճառում են որպէս Գունձասարայ վանքի
հանքի արտադրութիւն, մինչդեռ վերջինս ե-
զակի է, ամբողջ Ղարաբաղում, մի կապալառուի
ձեռքի է և Գունձասարի վանահօր հսկողու-
թեան տակ։

* Ծ. Խ. Մեր ունեցած տեղեկութեան համեմա-
Տաշրուունի այդ հշանառ արձանագրութիւնը այժմ
գտնուում է Բերդինի բանգարանում։